ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՀՀ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր
e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պաշտոնատար անձանց թեկնածուներին ներկայացվող պահանջներին և սահմանափակումներին:

Մասնագիտական գրականության մեջ ‹‹նվազագույն պահանջներ›› հասկացությունն արտահայտվում է «ցենզ» եզրույթով: Ցենզերը դրսևորվում են տարիքային, քաղաքացիության, նստակեցության, կրթական, գիտական, մասնագիտական, լեզվական, գույքային և այլ պարտադիր պահանջների ձևով: Հոդվածում նշվում է, որ պաշտոնատար անձանց թեկնածուների համար նախատեսված նվազագույն պահանջները և անհամատեղելիության մասին դրույթներն անհրաժեշտություն են՝ հասարակական կարգի և օրինականության ապահովման, պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարման տեսանկյուններից: Հոդվածում քննարկվում են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, դատավորների, դատախազների և պաշտոնատար այլ անձանց թեկնածուներին ներկայացվող նվազագույն պահանջներն ու անհամատեղելիության մասին դրույթները: Արվում է եզրակացություն Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի տարիքային ցենզը բարձրացնելու, բարձրագույն մասնագիտական կրթության պահանջ նախատեսելու և ՀՀ պաշտոնատար անձանց կարգավիճակին համապատասխանող այլ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, սահմանադրական պահանջ, սահմանափակում, անհամատեղելիություն, ցենզ, տարիք, քաղաքացիություն, նստակեցություն, կրթություն, կարգավիճակ, իրավական կարգավորում, Ազգային ժողով, պատգամավոր, Հանրապետության նախագահ, կառավարություն, դատավոր, դատախազ, Մարդու իրավունքների պաշտպան, պաշտոնատար անձ:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ի թիվս այլ հիմնադրույթների, ամրագրում է հանրային իշխանության ինստիտուտների կազմավորման և գործունեության հիմնական սկզբունքներն ու կարգը, ինչպես նաև նախատեսում է պաշտոնատար անձանց թեկնածուներին առաջադրվող նվազագույն պահանջներ և որոշակի սահմանափակումներ:

Հարց է ծագում՝ արդյոք այդ պահանջներն անհրաժեշտությո՞ն են, թե՞ պայմանականություն. . .

‹‹Անհրաժեշտություն›› հասկացությունը բացատրվում է որպես ‹‹երևույթների օրինաչափ կապակցվածություն, որ բխում է իրերի բնությունից››[1]: Իսկ ‹‹պայմանականությունը›› մեկնաբանվում է որպես ‹‹պայմանական բնույթ կրող, ընդունված՝ գործադրվող, սակայն իրականում ավելորդ՝ ոչ բանական ձևականություն, սովորություն, արարողություն››[2], փիլիսոփայական մեկնաբանությամբ՝ ‹‹Ամեն մի երևույթ աներևակայելի է ինչպես առանց իր ներքին անհրաժեշտության, այնպես էլ առանց իր արտաքին ‹‹պատահական›› նախադրյալների››[3]: Ուստի անհրաժեշտությունն այն է, ինչ որոշ պայմաններում անխուսափելիորեն պետք է կատարվի[4]: Հեգելյան փիլիսոփայությամբ՝ գոյություն ունեն փոխադարձ կապեր պատահականության և անհրաժեշտության միջև[5]: Զարգացման գործընթացը միաժամանակ տեղի է ունենում պատահականություններն անհրաժեշտության վերածելու և պատահականությունների համակցության միջոցով անհրաժեշտության դրսևորման ճանապարհով[6]:

Այսպիսով, ՀՀ պաշտոնատար անձանց թեկնածուներին սահմանադրորեն ներկայացվող նվազագույն պահանջները կարող ենք բնութագրել որպես անհրաժեշտություն կամ անհրաժեշտ պայմանականություն, որոնք հասարակության զարգացմանը և սոցիալական պահանջների ու սպասելիքների փոփոխություններին զուգընթաց կարող են վերանայվել ու փոփոխվել:

Իրավագիտական գրականության մեջ ‹‹նվազագույն պահանջներ›› հասկացությունն արտահայտվում է «ցենզ» եզրույթով:

---

[1] Տե՛ս Աղայան Է. Բ. , Արդի հայերեն բացատրական բառարան, Երևան:‹‹Հայաստան››, 1976, էջ 68:

[2] Նույն տեղում, էջ 1177:

[3] Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Թարգմանություն ռուսերեն 3-րդ հրատարակությունից, Երևան, ‹‹Հայաստան››, 1975, էջ 17:

[4] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1974, էջ 426:

[5] Տե՛ս Алексеев П. В., Панин А. В., Философия, Учебник, М.:Проспект, 1996, էջ 416:

[6] Նույն տեղում, էջ 418:

Արդի հայերեն բացատրական բառարանում ‹‹ցենզ›› բառահոդվածին տրված է մի քանի բացատրություն, այդ թվում՝ ‹‹Քաղաքացիներին այս կամ այն իրավունքից օգտվելու թույլտվության պայման››[1]: Ցենզերը դրսևորվում են տարիքային, քաղաքացիության, նստակեցության, կրթական, գիտական, մասնագիտական, լեզվական, գույքային և այլ պարտադիր պահանջների ձևով:

Անհրաժեշտության և պայմանականության մասին առաջադրված հարցի տեսանկյունից ցենզերի սահմանումը և դրանց պահպանումը համարում ենք անհրաժեշտություն՝ հասարակական կարգի և օրինականության պահպանման, կարևոր սոցիալական, համապետական խնդիրների լուծման, պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականությունների արդյունավետ իրականացման նպատակներով:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ընդունեց պետության կառավարման խորհրդարանական ձևը, ուստի պաշտոնատար անձանց թեկնածուներին ներկայացվող նվազագույն սահմանադրական պահանջների և սահմանափակումների վերլուծությունը կսկսենք հենց ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներից[2]:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուին առաջադրվում են հետևյալ նվազագույն պահանջները.

1. տարիքային պահանջ՝ քսանհինգ տարին լրացած անձը կարող է հավակնել պատգամավորի մանդատի:

Մեր կարծիքով, քսանհինգ տարվա պահանջը պետք է վերանայել և նախատեսել առնվազն երեսուն տարին լրացած լինելու պահանջ:

Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող տասներկուամյա կրթական համակարգի պայմաններում անձը դպրոցն ավարտում է տասնութ տարեկանում: Արական սեռի երիտասարդը սահմանված կարգով զինծառայությունն անցնելու դեպքում դառնում է քսան տարեկան: Համալսարանում երկաստիճան բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ է վեց տարի: Քսանվեց տարեկանը լրացած անձը սկսում է աշխատանքային փորձ ձեռք բերել, հմտանալ

---

[1] Տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերեն բացատրական բառարան, Երևան, ‹‹Հայաստան››, 1976, էջ 1475:

[2] Պետության կառավարման ձևի, պառլամենտի և պառլամենտարիզմի մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2007, 708 էջ:

մասնագիտության մեջ: Հետևաբար նա օբյեկտիվորեն չի կարող ծավալել արդյունավետ օրինաստեղծ գործունեություն, պատշաճ կերպով իրականացնել ներկայացուցչական գործառույթներ, բավարարել հանրային սպասելիքները: Իսկ սահմանադրորեն պատգամավորի թեկնածուին քսանհինգ տարվա տարիքային նվազագույն պահանջի առաջադրումը հանգեցնում է նրան, որ մագիստրատուրայում սովորող երիտասարդները կարող են ընտրվել պատգամավոր: Միաժամանակ բարձրագույն կրթական ցենզ չի առաջադրվում, որն անհրաժեշտ ենք համարում: Ստացվում է, որ աշխատանքային գործունեության լուրջ փորձ և բարձրագույն մասնագիտական կրթություն չունեցող երիտասարդը, ով չի թրծվել աշխատանքային միջավայրում, ազգային ու միջազգային հարթակներում, կարող է օրենսդիր մարմնի անդամ առաջադրվել ու ընտրվել: Պատահական չէր, որ հին Հռոմում պետական բարձրագույն մարմինը ‹‹սենատ›› կամ ‹‹ծերակույտ››[1] էր կոչվում, և կայսրը խորհրդակցում էր կյանքի ճանապարհ անցած, փորձ ունեցող, իմաստուն մարդկանց հետ:

Մեր կարծիքով՝ երիտասարդների եռանդն ու ներուժը պետք է ներդնել տեղական ինքնակառավարման համակարգում, մարզային կառույցներում, պետական կառավարման մարմիններում, իսկ խորհրդարանում պետք է գործեն կյանքի փորձ ունեցող, բարձրագույն մասնագիտական կրթությամբ, հասուն մարդիկ, ովքեր կարող են լավագույնս մշակել և ընդունել կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորմանը միտված բազում օրենքներ:

2. Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուին ներկայացվող երկրորդ պահանջը քաղաքացիության ցենզն է: Եթե 1995 թվականին ընդունված և 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվում էր վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու պարտադիր նորմը, ապա 2015 թվականի փոփոխություններով ամրագրվեց ‹‹վերջին <u>չորս տարում միայն</u> Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու›› մասին պահանջը: Այսպիսով, մեկ տարի կրճատվեց քաղաքացիության ցենզը, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Միաժամանակ իմպերատիվ կերպով արգելվեց երկքաղաքացիների մուտքը խորհրդարան: Մի կողմից արգելքը թվում է միանգամայն ընդունելի, քանի որ բխում է մեր պետության անվտանգության շահերից, իսկ մյուս կողմից՝ այն հարուցում է մարդկանց դժգոհությունը՝ հաշվի առնելով հսկայածավալ հայկական սփյուռքի առկայությունը և ազգությամբ հայերի համար քաղաքացիության ձեռքբերման հեշտացված կարգը: Կան երկրներ, որոնք

[1] Տե՛ս Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Երևան, 2011:

իրենց քաղաքացուն անգամ երկրում չապրելու, քաղաքացիությունից դուրս գալու մասին դիմումի դեպքում չեն զրկում քաղաքացիությունից: Այն անձը, ով հաստատվել և տարիներ շարունակ ապրում է Հայաստանի Հանրապետությունում, մնալով երկքաղաքացի, չի կարող դառնալ պատգամավորի թեկնածու: Սփյուռքի նկատմամբ ՀՀ-ում տարվող քաղաքականության համատեքստում այս հարցը լուրջ քննարկումների կարիք ունի:

3. Գործող ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատգամավորի թեկնածուն պետք է համապատասխանի նաև նստակեցության ցենզին՝ վերջին չորս տարին մշտապես բնակված լինի ՀՀ-ում: Սակայն չորս տարին քիչ ենք համարում և գտնում ենք, որ նախկին իրավակարգավորումը՝ առնվազն հինգ տարի պահանջով, առավել ընդունելի է, հատկապես եթե հաշվի առնենք այլ պետությունների համանման փորձը:

4. Կարևոր պահանջ է ընտրական իրավունք ունենալը, ինչը ենթադրում է, որ անձը որևէ հիմքով իր քաղաքական կարևոր իրավունքից՝ ընտրելու և ընտրվելու իրավունքից, զրկված չէ: Նշված նորմը հիմնավորված է, քանի որ իրավաչափ պահանջ է ամրագրում:

5. 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում իրավացիորեն նախատեսվեց լեզվական ցենզ, որը նախկինում սահմանված չէր: Միանգամայն համամիտ ենք, որ պատգամավորի համար պարտադիր պահանջ կամ անհրաժեշտ պայման է հայերենին տիրապետելը, քանի որ Հայաստանի Հանրապետությունում պետական լեզուն հայերենն է[1]: Պաշտոնական լեզվին չտիրապետող անձը չի կարող մասնակցել ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման, դրանց քննարկման ու ընդունման աշխատանքներին: Գտնում ենք, որ լեզվական ցենզն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Կարծում ենք, որ Սահմանադրության փոփոխությունների դեպքում հարկ է նախատեսել նաև բարձրագույն մասնագիտական կրթություն ունենալու պահանջ: Որոշակի մասնագիտության տիրապետող անձը կկարողանա հստակ կերպով ձևակերպել ու բարձրացնել մասնագիտական լուծումներ և համապատասխան իրավակարգավորումներ պահանջող խնդիրներ:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը ոչ միայն պոզիտիվ, այլև նեգատիվ՝ արգելող բնույթի պահանջներ է սահմանում: Այսպես, ընտրական իրավունք, հետևաբար և պաշտոններում, այդ թվում՝ քաղաքական պաշտոններում ընտրելու և ընտրվելու, նշանակվելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը, Երևան, 2015, էջ 15:

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ չեն ճանաչվել,

2) դիտավորյալ ծանր հանցագործություններ չեն կատարել և չեն դատապարտվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ինչպես նաև նշված հանցագործությունների համար պատիժ չեն կրում:

Այլ հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք ունեն ակտիվ ընտրական իրավունք՝ ընտրելու իրավունք, սակայն զրկված են պասիվ իրավունքից՝ ընտրվելու իրավունքից[1]:

Նշված սահմանափակումը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասում, որը, մեր կարծիքով, թերի է: Այսպես, եթե ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքից զրկվում են դիտավորյալ մեղքով ծանր հանցանքներ կատարած անձինք, ապա այդ իրավունքը արդյո՞ք չի սահմանափակվում առանձնապես ծանր դիտավորյալ հանցագործություններ կատարած անձանց համար: Պատասխանը, իհարկե, միանշանակ է՝ սահմանափակվում է: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություններն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի դասակարգվում են չորս տեսակի՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ[2]: Հասարակական վտանգավորության ամենաբարձր աստիճանով բնութագրվում են նախ առանձնապես ծանր, ապա ծանր հանցագործությունները, ուստի առաջարկում ենք ՀՀ Սահմանադրությունը վերանայելիս 48-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսել «առանձնապես ծանր և ծանր հանցանքները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու և ընտրելու իրավունքի սուբյեկտը պետք է տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացի լինի: Այսինքն՝ սահմանվում է երկու պարտադիր պահանջ կամ անհրաժեշտ պայման՝ տարիքային և քաղաքացիության: Գտնում ենք, որ տասնութ տարին լրացած անձը պետք է ունենա տեղական ինքնակառավարման մարմիններին ընտրելու, բայց ոչ ընտրվելու իրավունք: Առաջարկում ենք համայնքային իշխանության մարմիններում նախատեսել առնվազն քսանմեկ տարին լրացած անձի ընտրվելու իրավունքը:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015, էջ 27:

[2] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք // www.arlis.am:

Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար սահմանադրորեն նախատեսված է քաղաքացիության ցենզը, իսկ մյուս պահանջները սահմանվում են օրենքով[1]:

Նվազագույն պահանջներից բացի՝ ՀՀ պաշտոնատար անձանց համար նախատեսված են տարբեր սահմանափակումներ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածը բովանդակում է պատգամավորական մանդատի անհամատեղելիության մասին նորմ, որի համաձայն՝ պատգամավորը չի կարող

1) զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում,

2) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,

3) կատարել վճարովի այլ աշխատանք բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից[2]:

Նշված պահանջները խախտելու դեպքում պատգամավորը կենթարկվի հարկադրական (նեգատիվ) սահմանադրական պատասխանատվության՝ լիազորությունների դադարեցման ձևով, ՀՀ Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով[3]:

Գործունեության անհամատեղելիության մասին պահանջի խախտումը հանգեցնում է օրենսդիր մարմնի անդամի սահմանադրական պատասխանատվության ոչ միայն Հայաստանում, այլև Էստոնիայում, Լիտվայում, Լատվիայում, Չեխիայում, Դանիայում, Նեապոլում, Լյուքսեմբուրգում և այլ պետություններում: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը հստակ սահմանված է ԱՄՆ-ի Սենատի 37-րդ մշտական կանոնում[4]: Լեհաստանի Սահմանադրությամբ ևս պատգամավորը ենթարկվում է սահմանադրական պատասխանատվության՝ տնտեսական գործունեություն իրականացնելու արգելքը խախտելու, ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Հունաստանի Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող լինել առևտրային կազմակերպության աշխատակից կամ գրասենյակի ծառայող, զբաղվել գործարարությամբ: Նա պարտավոր է ընտրվելուց հետո ութօրյա ժամկետում

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը, Երևան, 2015, էջ 27:

[2] Նույն տեղում, էջ 41:

[3] Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Ռ. Խ., Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան, «Իրավունք», 2008, 516 էջ:

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, «Իրավունք», 2010, էջ 692:

հայտարարել իր գործունեությունը դադարեցնելու կամ պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին[1]: Ռուսաստանի Դաշնությունում Պետական դումայի անդամին արգելվում է լինել պետական կամ համայնքային ծառայող, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Նշված պահանջները խախտելու դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցվում են[2]: Սակայն որոշ պետություններում, օրինակ՝ անգլո-սաքսոնական երկրներում, Եգիպտոսում, Ռումինիայում պատգամավորները միաժամանակ կարող են լինել նախարար, այսինքն՝ պառլամենտում պահպանում են իրենց քվեարկելու իրավունքը[3]:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի համար սահմանադրորեն ամրագրված պահանջները նախատեսված են նաև կառավարության անդամի համար:

Մի կողմից կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները (ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ մյուս կողմից՝ Կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները (ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի 2-րդ մաս): Թեև սահմանադրորեն նախատեսված է, որ նախարարների համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ, սակայն ‹‹Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին›› ՀՀ օրենքով լրացուցիչ պահանջներ նախատեսված չեն:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, խորհրդարանական կառավարման ձևի ընդունմամբ պայմանավորված, ՀՀ նախագահի լիազորությունները խիստ սահմանափակվեցին, միաժամանակ նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները հստակորեն ամրագրվեցին: Այսպես, տարիքային ցենզը 35 տարեկանից ավելացավ 5 տարով, որը հիմնավորված ենք համարում: Միաժամանակ չորս տարով կրճատվեցին քաղաքացիության և նստակեցության ցենզերը: Նախագահի թեկնածուի համար տարբեր պետություններում սահմանվում են տարբեր տարիքային ցենզեր: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասը ՌԴ նախագահի թեկնածուի համար սահմանում է տարիքային ցենզ՝ 35 տարեկան, և 10 տարվա նստակեցության ցենզ[4]:

---

[1] Նույն տեղում:

[2] Պահանջը սահմանված է ‹‹ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամի և Պետական դումայի պատգամավորի կարգավիճակի մասին›› դաշնային օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածներում:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 692:

[4] Տե՛ս Конституция Российской Федерации // http://www.constitution.ru/index.htm:

Նիկարագուայում նվազագույն տարիք է սահմանված 25-ը, Վենեսուելայում, Դոմինիկյան Հանրապետությունում նախատեսված է 30-ը, Ավստրիայում, Հունգարիայում, Մեքսիկայում, Պորտուգալիայում, ԱՄՆ-ում՝ 35-ը, Գերմանիայում, Հոունաստանում, Եգիպտոսում, Լատվիայում, Թուրքիայում՝ 40-ը, Չինաստանում, Մոնղոլիայում՝ 45-ը, Իտալիայում՝ 50-ը[1]: Կան երկրներ, որտեղ սահմանված է նաև նախագահի առավելագույն թույլատրելի տարիքը, որը ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված չէ: Օրինակ՝ Մոզամբիկի, Ղրղզստանի, Տաջիկստանի Սահմանադրությամբ առավելագույն տարիք է սահմանված 65-ը, իսկ Թունիսի Սահմանադրությամբ՝ 70-ը[2]: Տարբեր պետություններում նախագահի թեկնածուի համար նախատեսված են նստակեցության տարբեր ցենզեր. 15 տարի՝ Ղազախստանում, Վրաստանում, 14 տարի՝ ԱՄՆ-ում, 10 տարի՝ Ուզբեկստանում, 5 տարի՝ Բուլղարիայում, Մոնղոլիայում, 3 տարի՝ Լիտվայում[3]:

Ուսումնասիրելով այլ պետությունների սահմանադրական իրավակարգավորումները՝ հանգել ենք այն եզրակացության, որ նախագահի թեկնածուի համար առավել ընդունելի է առնվազն 10 տարվա քաղաքացիության և առնվազն 10 տարվա մշտական բնակության պահանջները, քան վեց տարվա ցենզը:

Պետության գլխին առաջադրվող սահմանափակումներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, այն է՝ նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք: Ընդունելի իմպերատիվ նորմ ամրագրվեց, ըստ որի՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ: Նման արգելքն անհրաժեշտություն է՝ ապահովելու համար նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը անկողմնակալ հետևելու, պետական իշխանության մարմինների միջև անաչառ իրավարարի դեր կատարելու գործառույթների պատշաճ իրականացումը: Սակայն հիմնական օրենքը չի ամրագրում նախագահի կողմից Սահմանադրությանը հետևելու գործառույթի իրականացման կառուցակարգերը, որը կարելի է սահմանադրականության ապահովման իրավակարգավորումների բաց համարել:

Անհամատեղելիության պահանջներ են նախատեսված նաև դատավորի համար: Այսպես, ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 575:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ: ‹‹Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք›› ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է դատավորի ապաքաղաքականացվածության սկզբունքը, ըստ որի՝ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

Դատավորի և Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները, ի թիվս այլ հիմքերի, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում՝ ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի, Դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի և ‹‹Սահմանադրական դատարանի մասին›› ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով:

Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներից է տարիքային ցենզը: ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի և վճռաբեկ դատարանի դատավորի համար նախատեսված է քառասուն տարին լրացած լինելու պահանջը, որը ճիշտ ենք համարում, սակայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների համար սահմանադրորեն տարիքային նվազագույն պահանջ նախատեսված չէ: Այն սահմանված է ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով՝ քսանութ տարեկան: Կարծում ենք, որ առաջին ատյանի դատարանի դատավորի համար նպատակահարմար է նախատեսել ոչ թե քսանութ, այլ երեսուն, իսկ վերաքննիչ դատարանի դատավորի համար՝ երեսունհինգ տարին լրացած լինելու պահանջը, քանի որ դատավորի կարգավիճակը խիստ պարտավորեցնող է և պատասխանատու: Նրանք վճռում են մարդկանց ճակատագրերը, և հարկ է, որ որոշակի կենսագրություն և աշխատանքային փորձ ունենան, լինեն լայն աշխարհայացքի տեր և արժեքային պատշաճ կողմնորոշումներ ունեցող, կայացած անձինք: ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ ‹‹Դատավորի համար սահմանվում է նրա <u>բարձր կարգավիճակին</u> և պատասխանատվությանը

համապատասխանող վարձատրություն››: Կարծում ենք՝ դատավորի բարձր կարգավիճակը ենթադրում է նաև տարիքային բարձր ցենզ, կենսափորձի և աշխատանքային փորձի առկայություն:

Բոլոր դատավորների, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող պարտադիր պահանջներն են՝

- ՀՀ քաղաքացիություն ունենալը,
- ընտրական իրավունք ունենալը,
- բարձր մասնագիտական որակներով օժտված լինելը,
- իրավաբանական բարձրագույն կրթություն ունենալը,
- հայերենին տիրապետելը:

Ինչ վերաբերում է աշխատանքի փորձին, ապա Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուից պահանջվում է առնվազն տասնհինգ, Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուից՝ առնվազն տասը տարվա փորձառություն:

ՀՀ Սահմանադրությամբ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորների թեկնածուների համար աշխատանքային փորձի նվազագույն պահանջ սահմանված չէ, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Փոխարենը ՀՀ Դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում դատավորի թեկնածուի հավակնորդի համար, այլ պահանջների հետ մեկտեղ, նախատեսված է առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառության պահանջ: Գտնում ենք, որ առաջին ատյանի դատարանի դատավոր կարող են նշանակվել առնվազն 5 տարվա, իսկ վերաքննիչ դատարանի դատավոր՝ առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ ունեցող անձինք:

ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է ՀՀ գլխավոր դատախազին ներկայացվող պահանջները, իսկ ‹‹Դատախազության մասին›› ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը նախատեսում է դատախազ նշանակվելու համար ներկայացվող հետևյալ ընդհանուր պահանջները.

‹‹1. Դատախազ կարող է նշանակվել 25-ից մինչև 65 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

2) տիրապետում է հայերենին.

3) որի նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները.

4)ավարտել է համապատասխան ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, եթե սույն օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերում չի ազատվում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից.

5) ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երկու տարվա փորձառություն››[1]:

Հաշվի առնելով դատախազի աշխատանքի բարդությունն ու պատասխանատվությունը՝ կարծում ենք, որ դատախազի համար առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքի պահանջը բավարար չէ և առավել նպատակահարմար է նախատեսել առնվազն հինգ տարին: Իսկ նույն օրենքի 34-րդ հոդվածը նախատեսում է դատախազ նշանակվելու հետևյալ սահմանափակումները.

1. Դատախազ չի կարող նշանակվել այն անձը, որը

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզգույշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել,

3)ունի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն[2],

4) չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, որոնք ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով,

5) որի նկատմամբ դիտավորյալ հանցագործության համար հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով,

6) ունի նաև այլ պետության քաղաքացիություն,

7) նախկինում դատախազի կամ դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման հետևանքով, եթե կարգապահական տույժի կիրառումից չի անցել մեկ տարի,

8) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից[1]:

---

[1] Տե՛ս ‹‹Դատախազության մասին›› ՀՀ օրենք // www.arlis.am:

[2] Նշված հիմքն անհրաժեշտ ենք համարում նախատեսել նաև մյուս պաշտոնատար անձանց թեկնածուների համար:

Եթե ՀՀ գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը, ապա գլխավոր դատախազի տեղակալի համար նախատեսվում է երեսուն տարեկանի ցենզը և մասնագիտական աշխատանքի առնվազն 7 տարվա պահանջը:

Հայեցողության տեղիք է տալիս ‹‹բարձր մասնագիտական որակներ›› հասկացությունը: Հարց է ծագում՝ որո՞նք են այդ որակների բնութագրիչները, ո՞վ և ի՞նչ չափումներով է որոշում մասնագիտական որակների ‹‹բարձրության աստիճանը››:

Նույն հարցը ծագում է ՀՀ Սահմանադրության 192-րդ հոդվածի 2-րդ մասի հետ կապված, ըստ որի Մարդու իրավունքների պաշտպան (այսուհետ՝ ՄԻՊ) կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք: ‹‹Բարձր հեղինակություն›› որակումը նույնպես հստակ իրավական հասկացություն չէ և հայեցողության լայն սահմաններ է ենթադրում: ՄԻՊ-ի թեկնածուն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները պետք է համապատասխանեն ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին: Սակայն ինչպես արդեն նշել ենք, ճիշտ չենք համարում պատգամավորի տարիքային նվազագույն սահմանը՝ 25 տարին: Նշված դիտարկումը հավասարապես վերաբերում է ինչպես ՀՀ կառավարության անդամի՝ ՀՀ վարչապետի, փոխվարչապետների, նախարարի, այնպես էլ ՄԻՊ-ի և վերը նշված պաշտոնատար անձանց թեկնածուներին: Առավել ընդունելի ենք համարում առնվազն 30 տարին լրացած լինելու պայմանը: Թերևս կարելի է քննարկել ՀՀ Սահմանադրության 192-րդ հոդվածում ՄԻՊ-ի թեկնածուի համար որպես կրթական ցենզ ոչ թե բարձրագույն կրթության, այլ բարձրագույն իրավաբանական կրթության անհրաժեշտության մասին պահանջ նախատեսելու հարցը, քանի որ մասնագիտական կրթությունը անհրաժեշտ է մարդու իրավունքների և ազատությունների խախտումներին համապատասխան իրավական գնահատական տալու և դրանց արձագանքելու, մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները պատշաճ իրականացնելու համար: Բացի դրանից՝ առաջարկում ենք ՀՀ

[1] Տե՛ս ‹‹Դատախազության մասին›› ՀՀ օրենք // www.arlis.am:

Սահմանադրության 193-րդ հոդվածի 5-րդ մասում որպես ՄԻՊ-ի լիազորությունների դադարեցման հիմք նախատեսել անհամատեղելիության մասին պահանջները խախտելը, ինչպես մյուս պաշտոնատար անձանց դեպքում:

Այսպիսով, ոչ միայն լեգիտիմ լինելու, այլև պաշտոնական պարտականությունները պատշաճ կատարելու և հանրային վստահություն ունենալու համար պաշտոնատար անձինք ընտրվելիս կամ նշանակվելիս պետք է ոչ թե պայմանականորեն, այլ իրապես ու անհրաժեշտաբար համապատասխանեն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին, կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով, ինչպես նաև պահպանեն օրենսդրորեն սահմանված՝ գործունեության անհամատեղելիության մասին նորմերը:

CONSTITUTIONAL REQUIREMENTS FOR OFFICE-HOLDER CANDIDATES IN THE ARMENIAN REPUBLIC: NECESSITY OR CONDITIONALITY

HAKOBYAN RUZANNA
Doctor of Law, Associate Professor,
Rector of Gavar State University

The article is dedicated to the requirements and restrictions for candidates of office-holders established by the Constitution of the Republic of Armenia.In professional literature, the concept of "minimum requirements" is defined by the term "census" (qualification). Qualifications are manifested in the form of age, citizenship, residence, educational, scientific, professional, linguistic, property and other mandatory requirements.

It is mentioned that the minimum requirements for the candidates of office-holders, and provisions on incompatibility are necessary from the perspective of ensuring public order and legality, as well as proper performance of duties by office-holders. The article dwells on the provisions on incompatibility and the minimum requirements for candidates of the Deputy of the National Assembly of the Republic of Armenia, the President of the Republic of Armenia, the member of the Government of the Republic of Armenia, the Human Rights Defender, judges, prosecutors and other officials. A conclusion has been made on increasing the age qualification for the candidate of Deputy of the National Assembly, imposing requirements for higher professional education and making other necessary changes corresponding to the status of RA officials.

***Keywords**: Constitution of the Republic of Armenia, constitutional requirement, restrictions, incompatibility, census, age, citizenship, residence, education, status, legal regulation, National Assembly, Deputy, President of the Republic, Government, Judge, Prosecutor, Human Rights Defender, Office-holder.*

КОНСТИТУЦИОННЫЕ ТРЕБОВАНИЯ – НЕОБХОДИМОСТЬ ИЛИ УСЛОВНОСТЬ ДЛЯ КАНДИДАТОВ ДОЛЖНОСТНЫХ ЛИЦ РА

АКОБЯН РУЗАННА
доктор юридических наук, доцент,
ректор Гаварского государственного университета

Статья посвящена требованиям и ограничениям, устанавливаемым Конституцией Республики Армения для кандидатов на должности высших должностных лиц. В профессиональной литературе понятие “минимальные требования” обозначается термином “ценз”. Цензы проявляются в виде ценза гражданства, оседлости, возрастного, образовательного, научного, профессионального, языкового, имущественного, и др. обязательных требований.

Отмечается, что положения о несовместимости и минимальные требования для кандидатов на должности высших должностных лиц необходимы с точки зрения обеспечения общественного порядка и законности, а также для того, чтобы должностные лица надлежащим образом выполняли свои обязанности. В статье обсуждаются положения о несовместимости и минимальные требования, предъявляемые к кандидатам на должность депутата Национальное Собрание РА, Президента РА, члена Правительства РА, защитника прав Человека, судьи, прокурора и другим должностным лицам.

Сделано заключение относительно повышения возрастного ценза кандидата в депутаты Национального Собрания, необходимости требования высшего профессионального образования и внесении других необходимых изменений, соответствующих статусу должностных лиц РА.

***Ключевые слова:** Конституция Республики Армения, конституционное требование, ограничения, несовместимость, ценз, возраст, гражданство, оседлость, образование, статус, правовое регулирование, Национальное Собрание, депутат, Президент Республики, правительство, судья, прокурор, Защитника прав человека, должностное лицо.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.09.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 10.10.2019թ.: